# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 256-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2022 թվականի տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին
Զեկ․Զեկ. Դ.Սարգսյան

2. Գույքի օտարման մասին:
Զեկ. Դ.Սարգսյան

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 257-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Դիլիջանի համայնքապետարանի և ՄԱԿ-ի գրասենյակի միջև կնքված UNDP-GCF-00098348 համաձայնագրի, որտեղ Դիլիջան համայնքը հանդես գալով որպես իրականացնող գործընկեր, պարտավորվում է կազմակերպել և իրականացնել Դիլիջանում գտնվող տասնմեկ բազմաբնակարան բնակելի շենքերի վերանորոգման էներգաարդյունավետությանը ուղղված վերազինման աշխատանքները, մասնավորապես Գետափնյա 2,4,6,8,10,12 և Օրջոնիկիձե 69,71,73,79,81 հասցեներում: Սույն ծրագրի շրջանակներում ՄԱԿ–ի զարգացման ծրագիրը իր համաձայնությունն է տալիս վճարել Դիլիջանի համայնքապետարանին գործողությունների կատարման համար, համաձայն հավելված 3–ում սահմանված վճարումների ժամանակացույցի /հավելվածը կցվում է/ : 30.11.2022թ. դրությամբ Դիլիջան համայնքի բյուջե է փոխանցվել 79218287 ՀՀ դրամ, որպես ՄԱԿ-ի կողմից համաֆինանսավորվող գումար (Գետափնյա 2 և Օրջոնիկիձե 69,71,73,79,81 շենքերի վերանորոգման համար): Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է նշված գումարը ճանաչել որպես եկամուտ /Նվիրատվություններ այլ արտաքին աղբյուրներից/ և ճանաչել ծախս /Բնակարանային շինարարություն/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգմամբ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է․

1. ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի կողմից փոխանցված 79218287 (յոթանասուն ինը միլիոն երկու հարյուր տասնութ հազար երկու հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամը ճանաչել եկամուտ:

2.ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի կողմից փոխանցված 79218287 (յոթանասուն ինը միլիոն երկու հարյուր տասնութ հազար երկու հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամը ճանաչել ծախս և ուղղել Դիլիջան համայնք /Բնակարանային շինարարություն/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 5113 հոդվածին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

## Գործողությունների ժամանակացույց, հարմարություններ և վճարումներ

### Տարի 2022

| Ակնկալվող արդյունքները և ցուցանիշները ներառյալ տարեկան թիրախները | Պլանավորված գործունեությունը Թվարկել բոլոր այն գործողությունները, որոնք պետք է ձեռնարկվեն տարվա ընթացքում նշված արդյունքների ուղղությամբ | Ժամկետը | | | | Նախատեսված բյուջեն | | Վճարումների ժամանակացույց ըստ ՄԱԿ-ի ԶԾ-ի | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Q1 | Q2 | Q3 | Q4 | Բյուջեի նկարագրություն | Գումարը | Q1 | Q2 | Q3 | Q4 |
| Էներգաարդյունավետությանը ուղղված վերազինում հետևյալ հասցեներում՝ Գետափնյա 2,4,6,8,10,12 հասցեներում | ա) Արտաքին պատերի, տանիքների, նկուղների ջերմամեկուսացում<br>բ) Արտաքին դռների և պատուհանների փոխարինում<br>գ) LED լուսավորման համակարգերի տեղադրում մուտքերում և աստիճանավանդակներում | | | | X | | 17,000,000<br>17,679,450<br>17,597,700<br>17,611,350<br>17,676,300<br>17,635,950 | | | | X |
| Էներգաարդյունավետությանը ուղղված վերազինում հետևյալ հասցեներում՝ Օրջոնիկիձե 69,71,73,79,81 | ա) Արտաքին պատերի, տանիքների, նկուղների ջերմամեկուսացում<br>բ) Արտաքին դռների և պատուհանների փոխարինում<br>գ) LED լուսավորման համակարգերի տեղադրում մուտքերում և աստիճանավանդակներում | | | | X | | 12,960,000<br>12,735,000<br>13,185,000<br>11,653,287<br>11,685,000 | | | | X |
| | | | | | | Ընդամենը | 167,419,037 | | | | |

<u>Նշում:</u>

- Սույն պայմանագրով ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից Դիլիջան համայնքին տրամադրվող համաֆինանսավորումը կազմում է բազմաբնակարան բնակելի շենքերի թույլատրելի ծախսերի 25%-ը (սուբվենցիոն ծրագրով ընտրված շենքերի էներգաարդյունավետ վերազինում)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 258-Ա

### ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել՝ համայնքի Հովսեփյան փողոցի թիվ 83 շենքի թիվ 18, երկու սենյականոց բնակարանն ուղղակի վաճառքի միջոցով վարձակալին օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող Հովսեփյան փողոցի թիվ 83 շենքի թիվ 18, երկու սենյականոց՝ 58,2 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը, վարձակալին ուղղակի վաճառքի ձևով, 87300 դրամով (մեկ քառակուսի մետրի համար սահմանված է 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ